ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ 1989-1998թթ

1988թ. դեկտեմբերի 7-ին ՀՀ տարածքում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը պատճառեց հսկայական նյութական և բարոյական վնասներ: Զգալիորեն տուժեց մեծությամբ և նշանակությամբ հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրին, որտեղ ավերվեցին բնակելի, հասարակական և արտադրական շենքերի 80 տոկոսը: Չորս տասնյակ վայրկյանում Լենինականում ավերվեց կամ կիսափուլ դարձավ 774 շինություն:[1] Երկրաշարժի հետևանքով զոհված շուրջ 25000 Հայաստանի քաղաքացիների ամենամեծ քանակը բաժին է ընկնում Գյումրիին,որը տարբեր աղբյուրների վրա հիմնված հաշվումների համաձայն տատանվում է 15-17000-ի սահմաններում:[2] Շարքից դուրս եկավ շինարարական ինդուստրիայի զգալի մասը: Աղետից վթարվեցին կամ քանդվեցին նաև կոմունալ տնտեսության,տրանսպորտի, հանրային, կապի, առևտրի, սննդի և այլ նշանակության մեծաքանակ օբյեկտներ, ինչպես նաև պատմական հուշարձաններ, հանրակրթական դպրոցներ, նախադպրոցական հիմնարկներ, առողջապահական հաստատություններ: Երկրաշարժի հետևանքով տարբեր աստիճանի վնասվածություն ստացած բնակարանային ֆոնդը կազմել է 8,9 միլիոն մետր[2] ընդհանուր մակերեսով բնակելի տներ,որից 3,6 միլիոն մետր[3] Շիրակի մարզում:

Նմանատիպ մասշտաբի երկրաշարշի հետևանքների վերացման փորձը ցույց է տվել, որ միայն աղետն ապրած երկրի ուժերով ու միջոցներով այն իրականացնել փաստորեն հնարավոր չէ:

Շինարարական կազմակերպական աշխատանքները կոորդինացնելու համար, Մոսկվայում ստեղծվեց երկրաշարժի հետևանքները վերացնելու հանձնաժողով ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովի ղեկավարությամբ:

---

[1] Մ. Մանուկյան, Երկրաշարժ, 1989, էջ 5:
[2] Ն. Մարգարյան, ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզում 1989-1998թթ., Եր., 2000, էջ15:
[3] Աղետի գոտու վերականգնման Առաջնահերթ ծրագիր,1998, էջ 6:

Դեկտեմբերի 8-ին հանձնաժողովը ժամանեց Երևան և անմիջապես մեկնեց աղետի գոտի և սկսեց իր անմիջական աշխատանքները, աղետի հետևանքները հաղթահարելու ուղղությամբ:[4]

«Արևմուտքի ոչ մի երկիր նման պայմաններում չէր կարող ավելի լավ կազմակերպել առաջին օգնությունը ցույց տալու և ավերածությունները վերացնելու գործը,- Հայաստանից Հաագա վերադառնալով օդանավակայանում լրագրողներին ասաց Նիդեռլանդների կարմիր խաչի ներկայացուցիչ Ք.դը Գրաաֆը,- ինչպես նախնական փուլում դա արեց Խորհրդային Միությունը: Չնայած օտարերկրյա օգնության նշանակալից ծավալին, տուժածների համար բեռների հիմնական հոսքը, այդուհանդերձ, գալիս է խորհրդային հանրապետություններից»:[5]

Դեռևս դեկտեմբերի 10-ին ստեղծվեց քաղաքաշինության պետական միջգերատեսչային հանձնաժողով, որի նպատակն էր ուսումնասիրել երկրաշարժից տուժած շրջանների բնակավայրերի տարածքը, քաղաքների և գյուղերի գլխավոր հատակագծերը,կառուցապատման նոր շրջանների նախագծերը համաձայնեցնել բոլոր միութենական հանրապետությունների, Մոսքաղգործկոմի, Մոսմարզգործկոմի, Լենքաղգործկոմի,երկրի խոշորագույն 8 նախարարությունների կողմից կառուցվելիք շինարարության ծավալի հետ:[6]

Ավերված շրջանների վերականգնման աշխատանքները կոորդինացնելու նպատակով ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1989թ. դեկտեմբերի 28-ին ընդունեց հատուկ որոշում:[7]

Փաստորեն,1989թ. դեկտմբերի 28-ի որոշմամբ արձանագրվեց, որ փրկարարական աշխատանքներն արդեն հիմնականում ավարտված են և ժամանակն է անցնել երկրորդ փուլին վերականգնողականին:

Վերականգնողական աշխատանքները իրականացվում էր ավերակույտերի մաքրմանը զուգընթաց: Դեկտեմբերի 10-ին Լենինականը հոսանք ստացավ: Երկու օր անց վերականգնվեց քաղաքի ջրամատակարարման չորս համակարգերից մեկը: Դեկտեմբերի 15-ին Հայտրանսշինի, Հարավշինմեքենայացման, Հարավայինի, Դոնեցկի շինարարների ջանքերով վերակառուցվեց երկաթուղու Լենինական-Սպիտակ-Կիրովական հատվածը և ճեպընթացը շարժվեց դեպի Թբիլիսի[8]:

---

[4] Երկրաշարժ, ժամանակագրություն, հ.1, էջ 31, Եր.,1989:
[5] «Սովետական Հայաստան» 30 դեկտեմբերի 1988:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում: Армения декабрь,88,Ереван,1990 г. ст 477.
[8] Մանուկյան Մ., Երկրաշարժ 1989թ. էջ 66:

1989թ. աղետի գոտում աշխատում էին Միության տարբեր շրջաններից եկած ավելի քան 40 հազար մասնագետներ,զինծառայողներ[9]:

Կործանարար երկրաշարժի արհավիրքների վերացման և տուժածներին օգնություն ցույց տալու գործին իրենց մասնակցությունը բերեցին արտասահմանյան գրեթե բոլոր երկրների կառավարությունները, կազմակերպությունները, աշխարհասփյուռ հայությունը, անհատ բարեգործները, հասարակական միությունները:

Աղետի գոտու ամենագործնական ու կարևոր հարցերից մեկը Լենինականի շինարարության ճիշտ ուղղության ընտրությունն էր:[10] Սկզբնապես որոշված էր, որ Լենինականը մնալու էր իր տեղում, պահպանելով պատմական ամբողջականությունը և 1991թ. այն ունենալու էր 200 հազար բնակչություն: Նախատեսված էր կառուցել 2 միլիոն քառակուսի մետր տարածությամբ բնակարաններ, կուլտուր-կենցաղային օբյեկտներ, ուսումնական և նախադպրոցական հաստատություններ, ինչպես նաև արտադրական ու սպասարկման ձեռնարկություններ: Նախագծողներն ու շինարարները ձգտում էին կրկին կյանք հաղորդել Կումայրի պատմական կենտրոնին, որպեսզի այն ունենար իր հնամենի շքեղությունը: Լենինականի նախագծման աշխատանքները իրականացնում էր «Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը: Ընդհանրապես նախագծային աշխատանքներ էին կատարում շուրջ 100 կազմակերպությունների 14 հազար ճարտարապետներ, ինժեներներ և այլ մասնագետներ:

1989թ. հունվարի 16-ին Երևանի ճարտարապետի տանը Ն. Ի. Ռիժկովը և ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովի անդամները ծանոթացան վերականգնվող քաղաքների և գյուղերի նախագծերին: Բուռն վիճաբանությունները շարունակվեցին մինչև ուշ գիշեր: Վեճը գնում էր հիմնականում Լենինականի շուրջ:

Նրանց մի մասը գտնում էր, որ քաղաքը պետք է փլատակներից վերականգնվի և շինարարությունը սկսվի ավերված թաղամասերից: Այուսների կարծիքով, այդ թաղամասերը դեռ պետք է մնան, իսկ շինարարությունը պետք է սկսել նոր տեղում:Իսկ որտե՞ղ: Նախատեսված շրջանը գտնվում էր քաղաքից մի քանի կիլոմետր հարավ-արևելք, բլրաշատ տեղամասում: Արևիկ և Այգաբաց գյուղերի միջև: Ընդդիմախոսները առաջարկեցին քաղաքը կառուցել հյուսիսային և հյուսիս - արևմտյան ուղղությամբ, վարելահողերի վրա Մարմաշեն գյուղի մոտ:

---

[9] Правда, 14 мая 1989г.

[10] Գիտություն և տեխնիկա, N12, 1989թ. 3 (315) դեկտեմբեր:

Երկու տարբերակներն էլ ունեին դրական և բացասական կողմեր: Առաջին տարբերակի (քաղաքի կառուցումը բլրաշատ տեղանքում) դրականն այն էր, որ օգտագործվում էին ոչ թե վարելահողերը այլ գյուղատնտեսության համար անօգտագործելի տարածքները, սակայն պետք է կառուցվեին նոր ճանապարհներ, ստորգետնյա հաղորդակցության ուղիներ և այլն: Նոր քաղաքը բավականաչափ հեռու էր մնում Լենինականից:

Երկրորդ տարբերակը որոշ չափով ծեռնտու էր,բայց ափսոս էին վարելահողերը: Ախուրյանի շրջանից սկզբնական շրջանում վերցվելու էին 58 հեկտար վարելահող, որի համար էլ Անի քաղամասը կոչվեց հիսունութ: Այս տարբերակի կողմնակիցները գտնում էին, որ ավելի լավ է քաղաքը կառուցել սեյսմակայուն տարածքում և այն կլինի ամուր և խաղաղ:

Ընտրությունը կատարվեց հօգուտ հյուսիս - արևմտյան տարբերակի կառուցել Լենինականի սահմանին կից, իսկ հետո անցնել ներքաղաքային, ավերված քաղամասերի վերականգնմանը:[11]

1989թ. Լենինականում սկսվեց բնակֆոնդի աննախադեպ ինտենսիվ կառուցում, և շինարարությունը նոր քաղամասերում ընթանում էր այնպիսի թափով, որ նոր Գյումրիի գաղափարը կյանքի կոչելը կասկած անգամ չէր հարուցում: Բուն քաղաքում նախատեսվում էր վերականգնել 1 միլիոն 23 հազար^2 մետր բնակելի տարածք: Քաղաքն ավերված էր, չէին գործում կոմունիկացիաները, այնպես որ հին քաղաքում խոշորամասշտաբ բնակարանային և սոցիալական խնդիրների լուծումը գործնականում անհնարին էր:

Չնայած երկրաշարժի հետևանքները վերացնելու համար նախկին Խորհրդային Միության իշխանությունների կողմից ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնցով նախատեսվում էր միութենական հանրապետությունների, նախարարությունների, գերատեսչությունների ուժերով 1989-1990 թվականներին հիմնականում վերականգնել աղետի գոտին, այն լիովին չհրագործվեց: Աղետի գոտում և մասնավորապես Գյումրի քաղաքում մեծ ծավալի աշխատանքներ կատարեցին նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների հարյուրավոր շինարարական կազմակերպություններ ներգրավելով շինարարական տեխնիկա, ավտոտրանսպորտ, շինանյութեր, աշխատուժ և այլն: Չնայած դրան, այդ կազմակերպությունները 1991թ. աշնանը, իսկ Ռուսաստանի դաշնության շինարարները 1993թ. ընթացքում հեռացան հանրապետությունից իրենց հետ տանելով շինարարական տեխնիկայի մեծ մասը: Փաստորեն 1991թ. աշնանից իրականացվող աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկավ

[11] Гай Д. Землетрясение в Армении, Москва,1989, ст.244.

հանրապետության շինարարական համալիրի ուսերին, որը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ[12]:

Վերականգնողական աշխատանքներին մեծ վնաս հասցրեց 1989թ. սեպտեմբերից Ադրբեջանի կողմից իրականացված շրջափակումը,[13] ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում, փախստականների օրհասական դրությունն ու հանրապետությունում տիրող սոցիալ – տնտեսական և էներգետիկ ճգնաժամը:

Հարց է ծագում, եթե ԽՍՀՄ –ը չփլուզվեր, կառավարության հավաստիացումները աղետի գոտին երկու տարում վերականգնելու մասին կունենա՞յին հիմք: Պատասխանը միանշանակ է ոչ, որովհետև առաջին տարում տեղադրվում էին շինարարական բազաները և աշխատանքներ էր տարվում քաղաքների ու գյուղական բնակավայրերի կառուցապատման նախագծերի մշակման և հաստատման ուղղությամբ: Շինարարությունը մեծ թափով սկսվեց և եթե այդ տեմպերը պահպանվեին, գոնե չորս տարվա ընթացքում հնարավոր կլիներ լուծել անօթևանության խնդիրը, սակայն փաստն այն է, որ այդ ամենի վրա հույս դնել չէր լինի ու այն ինչ արվեց ընդամենը 1/3-ն էր սկսածի, իսկ 2/3-ը մնաց անավարտ:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու, վերականգնողական աշխատանքներին նոր լիցք հաղորդելու համար ՀՀ կառավարությունը 23.04.1991թ. թիվ 196 կարգադրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարեց մշակել աղետի գոտու վերականգնման ծրագիր,որը հավանություն ստանալով 1991թ. նոյեմբերի 15-ին ներկայացվեց ՀՀ Գերագույն Խորհրդի քննարկմանը: Սակայն, անցած ժամանակահատվածում փոփոխված սոցիալ-տնտեսական ելակետային բազան ստիպում էր այդ ծրագրի վերանայում, որի կապակցությամբ ՀՀ կառավարությունը 27.01.1993թ. թիվ 30 կարգադրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը պարտավորեցրեց որպես պատվիրատու կազմակերպություն վերակազմել այն:[14]

1993թ. հոկտեմբերի 4-ի թիվ 500 որոշմամբ ՀՀ կառավարությունը որոշում է Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին աղետի գոտու վերականգնման ծրագրի պատրաստման և իրականացման նպատակով

---

[12] Շինարարական - վերականգնողական աշխատանքներն աղետի գոտում 1989-1998, Եր., 1990, էջ 3:
[13] Շրջափակում, հ. 1, ժամանակագրություն, Եր.,1990, էջ3
[14] Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ ՀԱԱ), ֆ.1185 ց.1, գ.5,թ.4-5:
[15] ՀԱԱ, ֆ.1185, ց.1, գ.5,թ.11:

ստեղծել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առնթեր Աղետի գոտու վերականգնման ծրագրի պատրաստման և իրականացման գրասենյակ տալով նրան իրավաբանական անձի կարգավիճակ:[15]

Երկրաշարժի հետևանքների վերացման ֆինանսական միջոցների օգտագործման կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից 1988-1993թթ. ընդունվել են 111 կարգադրություն և 9 որոշում:[16]

ՀՀ կառավարությունը 1994թ. հունվարի 7-ի թիվ 17 որոշումով հաստատեց աղետի գոտու վերականգնման և շինարարական աշխատանքների հանրապետական նպատակային ծրագիր:[17] Ճշտվեցին երկրաշարժի հետևանքով տուժած բնակավայրերի առանձին ոլորտների վերականգնման ենթակա ծավալները և իրականացման ժամկետները:

Ընդհանուր առմամբ 90-ականների կեսերը պարապուրդային տարիներ էին, իսկ 1994թ. նպատակային ծրագիրը փաստորեն մնաց միայն թղթի վրա: Շիրակի մարզը և մասնավորապես Գյումրի քաղաքը մատնվեց անտերության: Ճիշտ է փոքր ծավալով շինարարություն իրականացվեց Համաշխարհային բանկի միջոցների հաշվին, սակայն այդ աշխատանքները կատարվում էին կիսատ – պռատ, շենքերը շահագործման էին հանձնվում ոչ ամբողջական ավարտուն տեսքով, որն էլ իր հերթին առաջ էր բերում նոր հիմնախնդիրներ: Կատարվող աշխատանքները չէին համապատասխանում քաղաքների զարգացման և շուկայական տնտեսության չափանիշներին: Վերականգնման ծրագրերը մշակվել էին մեկ այլ ժամանակի և այլ համակարգի պայմաններում: Ընդունված մոտեցումները ժամանակին թվում էին իրագործելի: Հասկանալի է, որ նախկինում ընդունված բազմաթիվ նոր քաղաքների հատակագծերը չափազանց ծավալուն էին և նախագծման, և իրականացման արժեքի գնահատման տեսակետից: Ժամանակին հարմար էր Խորհրդային Միության բոլոր հանրապետություններից ժամանած նախագծողներին ներկայացնել մեծածավալ բյուջե: Հսկայական ներդրումներ էին արվել նոր տարածքների շինարարության մեջ, սակայն այդ ներդրումների մեծ մասը կարելի է դիտարկել տնտեսագիտորեն ասած որպես «կորսված ծախք»:

Նախկինում շինարարական աշխատանքները կատարվում էին միայն նոր թաղամասերում, սակավ ուշադրություն դարձնելով հին թաղամասերի վերականգնմանը: Արդյունքում անավարտ բազմաբնակարան շենքերը և սպասարկման ենթակառույցները գտնվում են Գյումրի քաղաքի նոր թաղամասերի մեծ

[16] ՀԱԱ, ֆ.1185, գ.1, գ.97,թ. 2:
[17] ՀԱԱ, ֆ.1185, գ. 1, գ.81,թ. 2:

անկառավարելի (քաղաքաշինական առումով) տարածքներում և մինչև օրս էլ անավարտ վիճակով քայքայվում են:

Թեև տասնամյակ շարունակ այս կամ այն չափով փորձ էր արվում լուծել աղետի գոտու վերականգնման խնդիրը, այնուամենայնիվ, փաստ է ,որ աշխատանքներն ակտիվացան միայն 1998թ., երբ ընդունվեց աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիր,[18] որով պետական ուղղակի միջամտությամբ և ռեսուրսներով առաջնային դարձան երկրաշարժից տուժած բնակավայրերի բնակարանային և սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը, ինչպես նաև սահմանվեցին անօթևան մնացած ընտանիքների նկատմամբ բնակարանների ապահովման և սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման պետության ստանձնած պարտավորությունների իրականացման ուղիները:

Այսպիսով, չնայած աղետի գոտու վերականգնման իրականացվող շարունակական ծավալուն աշխատանքներին, աղետի գոտու բնակավայրերը և հատկապես Գյումրին դեռևս պահպանում են աղետյալ բնակավայրերի տեսք: Դա պայմանավորված է բնակավայրերի հին քաղամասերում տարերայնորեն տեղակայված մեծաքանակ ժամանակավոր կացարանների, տնակների և մինչ այժմ քանդման ենթակա և վթարային տների ու շինությունների առկայությամբ:

Եվ վերջապես, երկրաշարժից հետո անցած տարիների ընթացքում Շիրակի մարզի բնակավայրերի ժողովրդագրական փոփոխությունները և վերականգնողական աշխատանքների իրականացման ընթացքը ևս նոր հարցադրումներ են առաջադրել վնասված քաղաքաշինական օբյեկտների նախկին ծավալներով կառուցման նպատակահարմարության առումով:

---

[18] Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիր, Երևան,1998: